

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2927

Շիրու

Դպիկը

Յոզիաննէս

Թուժանեան



891.99v
Թ-95


010
8.9

891.99 Կ
Ք - 95

Գ-Ջ 0/0

Յոզիաննէս Թուժանեան

Ծ Ի Տ Ը



ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄ
ԱՆԴՐԱՆԻԿ ԱՂԱԶԱՐԵԱՆ



ԾԻՏԸ

Լինում է, չի լինում մի ծիտ:

Մի անգամ էս ծտի ոտը փուշ է մտնում: Դէս է թռչում, դէն է թռչում, տեսնում է՝ մի պառաւ փէտի է ման գալի, թոնիր վառի, հաց թխի: Ասում է.

— Նանի ջան, նանի, ոտիս փուշը հանի, թոնիրդ վառի, ես էլ գնամ քուջուջ անեմ, դլուխս պահեմ:

Պառաւը փուշը հանում է, թոնիրը վառում:

Ծիտը գնում է, ետ գալի, թէ՛ փուշը ետ տուր ինձ: Պառաւն ասում է.

— Փուշը թոնիրն եմ գցել:

Ծիտը կանգնում է, թէ՛

— Իմ փուշը տուր, թէ չէ դէս թռչեմ, դէն թռչեմ, լոշիկդ առնեմ, դուրս թռչեմ:

Պառաւը մի լոշ է տալի: Ծիտը լոշն առնում է թռչում:




1979 թվական



100563-42





Գնում է տեսնում՝ մի հովիւ անհաց կաթն է ուտում: Ասում է.

— Հովիւ ախպէր, կաթն ինչո՞ւ ես անհաց ուտում: Ա՛յ լոշը ա՛ն, կաթնի մէջ բրդի՛, կե՛ր. ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, ետ գալի, թէ լոշս տուր:
Հովիւն ասում է.

— Կերայ:

— Ձէ՛, — ասում է, — իմ լոշը տուր, թէ չէ դէս թռչեմ, դէն թռչեմ, գառնիկդ առնեմ, դուրս թռչեմ:

Հովիւը ճարահատած մի գառն է տալի: Առնում է թռչում:





Գնում է տեսնում՝ մի տեղ հարսանիք են անում,
մսացու շունեն, որ մորթեն:

Ասում է.

—Ի՞նչ էք մոլորել: Ա՛յ, իմ գառն առէք, մորթե-
ցէք, քէֆ արէք: Ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պա-
հեմ:

Գնում է, գալի, թէ՛ իմ գառը տւէք:

Ասում են.

—Մորթել ենք կերել, ո՞րտեղից տանք:
Սա կանգնում է, թէ՛ չէ, իմ գառը տալիս էք՝
տւէք, թէ չէ՛ դէս թռչեմ, դէն թռչեմ, հարսին առնեմ,
դուրս թռչեմ:

Ու հարսին առնում է թռչում:


Գնում է, գնում. գնում է տեսնում՝ մի աշուղ
մի ճամբով գնում է:

Ասում է.

—Աշուղ ախպէր, առ էս հարսին պահի քեզ մօտ:
Ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:







Գնում է, ետ գալի աշուղի առաջը կտրում, թէ՛
իմ հարսը ինձ տուր:

Աշուղը ասում է.


— Հարսը գնաց իրենց տուն:

Սա թէ՛ չէ, իմ հարսը տուր, թէ չէ՛ դէս թռչեմ,
դէն թռչեմ, սագիկդ առնեմ դուրս թռչեմ:

Աշուղը սագը տալիս է իրեն:

Սաղն առնում է, ուսը գցում, թռչում, մի տեղ
նստում է, սկսում է ածել ու ճըտվըտալով երգել.

Ծրնգլը, մրնգլը,
Փուշիկ սի, լոշիկ առայ,
Լոշիկ սի, գառնիկ առայ,
Գառնիկ սի, հարսիկ առայ,
Հարսիկ սի, սագիկ առայ,
Սագիկ առայ, աշուղ դառայ,
Ծրնգլը, մրնգլը,
Ծի՛ւ ծի՛ւ:



Յոզիաննէս Թուժանեան

Ուշիկ



ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄ
ԱՆԴՐԱՆԻԿ ԱՂԱԶԱՐԵԱՆ




Ա.

Խոր անտառում մի այծ է լինում: Ունենում է
մի գեղեցիկ ուլ:

Ուլին ամեն օր թողնում է տանը, ինքը գնում է
արօտ անելու: Արածում է և իրիկունը կուրծքը լիքը տուն
է գալիս: Տուն է գալիս, դուռը զարկում ու մկկում,
կանչում.

Սնուկ ուլիկ,
Սիրուն բալիկ,
Ման եմ եկել սարե-սար,
Կաթն եմ արել ֆեղ համար,
Դոնակը բա՛ց, ներս գամ ես,
Անուտ-անուտ ծիծ սամ ֆեղ.
Սնուկ ուլիկ,
Սիրուն բալիկ:

Ուլիկն իսկոյն վեր է թռչում, դուռը բաց անում
Մայրը ծիծ է տալիս նրան ու կրկին գնում արօտ:






Էս բոլորը թագուն տեսնում է գայլը: Մի իրիկուն
այծից առաջ գալիս է, դուռը զարկում ու իր հաստ ճայ-
նով կանչում.

Սնուկ ուլիկ,
Սիրուն բալիկ,
Ման եմ եկել սարե-սար,
Կարն եմ արել քեզ համար,
Դոնակը բա՛ց, ներս գամ ես,
Անուռ-անուռ ծիծ սամ քեզ.
Սնուկ ուլիկ,
Սիրուն բալիկ:

Ուլիկը լսում է, լսում ու պատասխանում. «Էդ ո՞վ
ես դու. չեմ ճանաչում: Իմ մայրը էդպէս չի կանչում:







Նա քաղցր ու բարակ ձայն ունի: Քո ձայնը կոշտ է ու
կոպիտ: Դուռը բաց չե՛մ անի... Գնա՛... Չեմ ուզում քեզ...»
Ու գայլը հեռանում է, գնում:


Գ.


Գալիս է մայրը, դուռը ծեծում.

Սենուկ ուլիկ,
Սիրուն բալիկ,
Ման եմ եկել սարե-սար,
Կարն եմ արել քեզ համար,
Դոնակը բա՛ց, ներս գամ ես,
Անուռ-անուռ ծիծ սամ քեզ.

Սենուկ ուլիկ,
Սիրուն բալիկ:

Ուլիկը դուռը բաց է անում, ծիծ է ուտում ու
մօրը պատմում.






Գիտե՞ս, մայրի՛կ, ինչ եղաւ: Մի քիչ առաջ մի՛նը
եկաւ, դուռը զարկեց ու կանչում էր.

Սեուկ ուլիկ,
Սիրուն բալիկ:

Ասում էր՝ դուռը բա՛ց արա: Էնպէ՛ս հաստ ձայն
ունէ՛ր: Էնպէ՛ս վախեցա՛յ, էնպէ՛ս վախեցա՛յ... Դուռը
բաց չարի, ասի՛ չեմ ուզում, գնա՛...
— Պա՛, պա՛, պա՛, պա՛, Սեուկ ջան, ի՛նչ լաւ է
եղել, որ բաց չես արել, — ասաւ վախեցած մայրը: — Էդ
գայլն է եղել. եկել է, որ քեզ ուտի: Միւս անգամ էլ
որ գայ, բաց չանես. ասա՛ գնա՛, թէ չէ իմ մայրը քեզ
կը սպանի իր սուր պոզերով:



«ՆԱՅԻՐԻ» ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻԻ 11

ԳԻՆԸ՝ 600 ՌԻԱԼ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 8 ԴՈՒԱՐ
ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ՝ «ՆԱՅԻՐԻ» ԳՐԱՏՈՒՆ
ԹԵՀՐԱՆ ՊՈՂՈՏԱՅ ԷՆՂԵԼԱԲ, ՔԱԼԷՋ, ԹԻԻ 1022

PUBLISHED BY NAYIRI BOOKSHOP
1022, AVENUE ENGHELAB, COLLEGE,
TEHRAN 11339 - IRAN.



1069-2006

ՆԱՄ ԿՏԱԲ : " ԳՆՉՏԻՔ " " ԲԶԳԱԼԵ "

ՆՈՒՏՆԵԿ : ԽՈՒԱՆՏ ԽՈՒԱՆԻԱՆ

ՆԱՏԻՐ : ՆԱՅԻՐԻ

ԽԻՐԱՅ : ԲՆՉԻՅԱՐ ՆՏԻՒՔԻ

ՆՈՒԻՏ ՉԱԲ : ԱՕԼ 1367


ՉԱԲ : ՏՐԿԵՏ ՏԵԽՆԻԿԱԼԻ

ԿՈՒ ՉԱԲ , ԹՂԻԿԻԴ , ԱՂԽԱՏԱՆ ԵՎ ԵՂՏԵՐԴԱՐԻ ՄԽՓՈՄ ԵՎ ՆԱՏԻՐ ԽՈՒՄԻՅԱՏԻՔ .

2921

500

2013



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՆ «ՆԱՅԻՐԻ» ԳՐԱՏՈՒՆ-ՏՊԱՐԱՆԻ